ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 7 - Ա
23 հունվարի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56-1 հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի ղեկավար Կորյուն Մարգարյանին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Նշանակված տուգանքը մուծել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005243119 հաշվի համարին, մուծման կտրոնը ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի հողօգտագործման և հողաշինարարության բաժին՝ 15-օրվա ընթացքում:
3. Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ Ն. Ղազարյանին՝ Կորյուն Մարգարյանի կողմից նշված ժամկետում տույժը չվճարելու դեպքում գանձումն իրականացնել դատական կարգով:
4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ. Մանուկյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ